ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 161 - Ա

«ՇԻՐԱԿ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԱՔԱՐԻ ՋՐԱՄԲԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Շիրակ» ջրօգտագործողների ընկերության կողմից իրականացվող՝ 45,935,134 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդաքարի ջրամբարի վերականգնում և արդիականացում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Շիրակ» ջրօգտագործողների ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 05536235) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Խաչատուր Պապոյան» Ա/Ձ-ի հետ (ՀՎՀՀ՝ 57282189) 2023 թվականի հունվարի 17-ին կնքված՝ N ՇՁ/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամբարի ենթակառուցվածքների վերանորոգման և

արդիականացման շինարարական աշխատանքների իրականացում՝ 13,985,751 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԴՎ ԻՆՎԵՍՏ» ՀՁ ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011727) 2023 թվականի հունվարի 17-ին կնքված՝ N ՇՁ/002 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արևային ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքների իրականացում՝ 31,449,383 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01569408) 2023 թվականի հունվարի 17-ին կնքված՝ N ՇՁ/003 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Շիրակ» ջրօգտագործողների ընկերությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

02.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ